ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտի 2026 թվականի N 0235-Ա

ՄԻԱՎՈՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արարատ համայնք, գյուղ Նոյակերտ, Գ.Չաուշի փողոց 60 և գյուղ Նոյակերտ, Գ.Չաուշի փողոց 62 հասցեները կրող անշարժ գույքերի սեփականատեր Արթուր Իշխանի Իվանյանի դիմումը՝ դրանք միավորելու և հասցե տրամադրելու վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Քաղաքացի Արթուր Իշխանի Իվանյանի սեփականությունը հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 03-066-0008-0017 և 03-066-0008-0016) Արարատ համայնք, գ. Նոյակերտ, Գ.Չաուշի փողոց 60 և գ. Նոյակերտ, Գ.Չաուշի փողոց 62 հասցեները կրող անշարժ գույքերը միավորել և հաշվառել որպես մեկ գույքային միավոր:

2.Հաշվի առնելով հասցեի եզակիության և որոշակիության սկզբունքը միավորման արդյունքում առաջացած նոր հասցեավորման օբյեկտին տրամադրել՝ համայնք Արարատ, Նոյակերտ, Գ.Չաուշի փողոց, 60-62 բնակելի տուն/ հասցեի որոշման ծածկագիր՝ 03022RCB3JBH/:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

06 մարտի 2026 թ.
ք. Արարատ